Երեխաների այլընտրանքային խնամքի համակարգի հզորացում

Բացահայտումներ Հայաստանից, Գանայից, Մոլդովայից և Ուգանդայից



Օգոստոս 2018

USAID FROM THE AMERICAN PEOPLE

MEASURE Evaluation

Երեխաների այլընտրանքային խնամքի համակարգի հզորացում

Բացահայտումներ Հայաստանից, Գանայից, Մոլդովայից և Ուգանդայից

Օգոստոս 2018

MEASURE Evaluation
Հյուսիսային Կարոլինայի համալսարան, Չեփել Հիլ
123 Վեստ Ֆրանկլինի փողոց, Մասնաշենք 330
Չեփել Հիլ, Հյուսիսային Կարոլինա 27516
Հեռախոս. +1-919-445-9350 | measure@unc.edu
www.measureevaluation.org

Սույն փաստաթուղթը ստեղծվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցության շնորհիվ՝ MEASURE Evaluation AID-OAA-L-14-00004 համագործակցության համաձայնագրի ներքո: MEASURE Evaluation նախաձեռնությունն իրականացվում է Հյուսիսային Կարոլինայի համալսարանի Կարոլինայի բնակչության հարցերով կենտրոնի կողմից (Չափել Հիլլ)՝ ICF International-ի, Ջոնս Սնոու Ինք.-ի, Առողջապահության կառավարման գիտությունների, Պալադիում և Տուլանի համալսարանի հետ համատեղ: Փաստաթղթում արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ Կառավարության տեսակետները: TR-18-282

ISBN: 978-1-64232-063-3

USAID FROM THE AMERICAN PEOPLE

MEASURE Evaluation

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 1
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4
ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 5
ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ 7
Ի՞ՆՉ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՒՄ Է ԽՆԱՄՔԻ ՈԼՈՐՏՆԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ 10
ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 13
ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ 16

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԽԻԿ	Այլընտրանքային խնամք իրականացնող կառույց
ԱԼԽԵՀ	Ավելի լավ խնամք երեխաների համար հանձնաժողով
ԵՀԹ	Երկրի հիմնական թիմ
ԽԲՆ	Խնամքի բարեփոխման նախաձեռնություն
ՍԱՎ	Սոցիալական ապահովության վարչություն
ՄԳ	Մշտադիտարկում և գնահատում
ԳԱՍԶՆ	Գենդերի, աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարություն
ԱԱՍՊՆ	Առողջապահության, աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԳԱԾ	Գործողությունների ազգային ծրագիր
ՍԱԱԳ	Սոցիալական աշխատանքների ազգային գործակալություն
ԾԽԵ	Ծնողազուրկ և խոցելի երեխաներ
ՇԽՏ	Շուրջօրյա խնամքի տներ երեխաների համար
ՍԱԱՏՀ	Սոցիալական աջակցության ավտոմատացված տեղեկատվական համակարգ
ԱՄՆ ՄԶԳ	Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն

Երեխաների այլընտրանքային խնամքի համակարգի բարեփոխումների գնահատումը բացառիկ էր չորս պատճառով՝ այն ինքնագնահատում էր իրականացված կառավարությունների և այլընտրանքային խնամքի բարեփոխումներում ներգրավված հիմնական շահագրգիռ կողմերի կողմից, այլ ոչ թե արտաքին գնահատում, ինչն առավել մեծ վստահություն և սեփականության զգացում ձևավորեց բացահայտումների նկատմամբ: Գնահատման մոտեցումը համակարգը դիտարկում էր բոլոր բաղադրիչների կտրվածքով, խնդրի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար: Երկրները գնահատվել են ՄԱԿ-ի երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի միջազգային չափանիշներին համապատասխան: Երկրները միմյանց հետ քննարկել են գնահատման գործիքը և կիսել գնահատման ընթացքում ձեռք բերված գիտելիքները:

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆՄԶԳ) Տեղահանված և ծնողազուրկ երեխաների հիմնադրամը (DCOF) աջակցում է MEASURE Evaluation ծրագրին հզորացնելու երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումները մշտադիտարկելու, գնահատելու և վերհանված խնդիրներին արձագանքելու կառավարությունների կարողությունները Հայաստանում, Գանայում, Մոլդովայում և Ուգանդայում՝(https://www.measureevaluation.org/our-work/youth-and-adolescents/alternative-care/alternative-care-for children?searchterm=alternative+care+for+children).

2017 թվականի վերջում և 2018 թվականի սկզբին MEASURE Evaluation ծրագիրն աջակցեց երկրներիի հիմնական թիմերին (ԵՀԹ)՝ յուրաքանչյուր երկրում իրականացնելու այլընտրանքային խնամքի համակարգի բարեփոխումների մասնակցային ինքնագնահատում: Կիրառված գնահատման գործիքն ի սկզբանե մշակվել էր ԱՄՆ ՄԶԳ / DCOF-ի և MEASURE Evaluation ծրագրի կողմից՝ հիմնվելով ՄԱԿ-ի երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի[1] վրա և նպատակ ուներ գնահատելու երեխաների այլընտրանքային խնամքի համակարգերը (Պատկեր 1): Գնահատման գործիքը կազմվել էր ըստ այլընտրանքային խնամքի համակարգի[2] ոլորտների և համակարգի բաղադրիչների:

[1] Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ)(2010): Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույց՝ Նյու Յորք, Նյու Յորք, ԱՄՆ: ՄԱԿ: Աղբյուր՝ https://www.unicef.org/protection/alternative_care_Guidelines-English.pdf

[2] «Երեխաների այլընտրանքային խնամքը» դա այն խնամքն է, որը տրամադրվում է այն երեխաներին, որոնց բաժանումը ընտանիքից հնարավոր չէ կանխել: Այլընտրանքային խնամքը կարող է տրամադրվել խնամակալության, խնամատարության, հաստատություններում շուրջօրյա խնամքի, ուղեցվող անկախ ապրելակերպի և խնամքի այլ ձևերով: Խնամքը հաստատությունում պետք է համարվի վերջին տարբերակ, միայն այն բանից հետո, երբ այլընտրանքային խնամքի բոլոր մյուս տարբերակները հնարավոր չէ կազմակերպել:



Պատկեր 1՝ Այլընտրանքային խնամքի համակարգի գնահատման շրջանակ

Յուրաքանչյուր երկիր տեղայնացրել է այս գործիքը՝ հիմնվելով Լոնդոնում կայացած աշխատաժողովի ընթացքում գործիքի վերանայման քննարկումների վրա (մանրամասների համար, այցելեք՝ https://www.measureevaluation.org/resources/publications/wp-17-39): Հարյուր վաթսուն հինգ մարդ է մասնակցել չորս երկրներում կազմակերպված գնահատման աշխատաժաղովներին (Հայաստանում՝ 66 մասնակից, Գանայում՝ 28, Մոլդովայում՝ 26, Ուգանդայում `45), պետական և ոչ պետական կառույցները, հասարակական կազմակերպությունները (ՀԿ) և միջազգային և դոնոր կազմակերպությունները լայնորեն ներկայացված էին: Բոլոր երկրներում ԵՀԹ-ի անդամները աջակցում կամ վարում էին գնահատման աշխատաժողովները:

Իրականացված գնահատումների հիման վրա, MEASURE Evaluation ծրագիրը մշակել է մանրամասն զեկույցներ՝ յուրաքանչյուր երկրում երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների վերաբերյալ (հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.measureevaluation.org/our-work/youth-and-adolescents/alternative-care/alternative-care-for-children?searchterm=alternative+care+for+children): Յուրաքանչյուր երկրի հետ գնահատելով երեխաների խնամքի և պաշտպանության իր համակարգը, MEASURE Evaluation ծրագիրն աջակցել է նաև տվյալ երկրում այլընտրանքային խնամքի համակարգի բարեփոխումների համար պատասխանատու նախարարությանը կազմակերպելու աշխատաժողով՝ գնահատման արդյունքների հիման վրա առաջնահերթություններ սահմանելու և գործողությունների ծրագրեր մշակելու համար: Այս զեկույցում ներկայացված են բոլոր չորս երկրների բացահայտումներն, ըստ համակարգի բաղադրիչների և խնամքի ոլորտների և ամփոփված են այլընտրանքային խնամքի համակարգերի զարգացման համար կատարված առաջարկությունները:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Կառավարում և առաջնորդում բաղադրիչը բավականին ուժեղ է բոլոր չորս երկրներում: Յուրաքանչյուր երկիր ստորագրել է կարևոր միջազգային պայմանագրեր, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան և ունի մշակված **քաղաքականություն և իրավական դաշտ**, որով առաջնորդվում է այլընտրանքային խնամքի ծառայությունների տրամադրման դեպքում:

- Հայաստանում վերանայված ընտանեկան օրենսգիրքը, Երեխաների իրավունքների մասին օրենքը և Սոցիալական աջակցության մասին օրենքը ապահովում են աջակցման շրջանակ յուրաքանչյուր երեխայի ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանության համար:

- Գանայում երեխաների խնամքի և պաշտպանության բարեփոխումների նախաձեռնությունը (ԽԲՆ) մեկնարկեց Ազգային գործողությունների ծրագրի շրջանակներում (ԱԳԾ) ծնողազուրկ և խոցելի երեխաների համար (ԾԽԵ): ԽԲՆ-ի նպատակն է ձևավորել ավելի հետևողական և կայուն մոտեցում Գանայում խոցելի երեխաների խնամքի համար, որպեսզի յուրաքանչյուր երեխա մեծանա ապահով ընտանեկան խնամքի ներքո:

- Մոլդովայում երկրի օրենսդրության գլխավոր մասն է կազմում ռիսկի տակ գտնվող և ծնողներից բաժանված երեխաների հատուկ պաշտպանության մասին N 140/2013 օրենքը: Հիմնական քաղաքականությունն ամփոփված է Երեխաների պաշտպանության 2014-2020 թթ ռազմավարության մեջ և ռազմավարության իրականացման 2016-2020 թթ միջոցառումների ծրագրում, որոնք ապահովում են օրենսդրական դաշտ՝ ծնողական խնամքից զրկված երեխաներին համապատասխան խնամքի տարբերակների տրամադրման և ծառայությունների մատուցման համար:

- Ուգանդայում, գլխավոր օրենսդրությունը, որը վերահսկում է ծնողներից բաժանված երեխաների խնամքը, դա «Երեխաների մասին» օրենքն է, գլուխ 59 (փոփոխված 2016 թ.ին): Բացի դրանից, 2012 թվականին մշակվել է ազգային այլընտրանքային խնամքի շրջանակ, և 2016-2017 թթ.- ին մշակվել է երեխաների այլընտրանքային խնամքի ազգային գործողությունների ծրագիր:

Այս քաղաքականություններն ու օրենքները միշտ չէ, որ ներառում են համապատասխան դրույթներ, որոնք ապահովում են հատուկ/նպատակային ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների և հաշմանդամություն ունեցող խնամակալների, 0-3 տարեկան երեխաների համար, նախապատրաստման աջակցություն և խորհրդատվություն խնամակալներին և երեխաներին խնամատարության, որդեգրման և վերամիավորման ժամանակ: Ոչ մի երկիր չունի իրավական/ քաղաքական դաշտ, որն ուղղորդում է ոչ ֆորմալ խնամակալությունը և ուղեկցվող անկախ ապրելակերպը: Թեև ազգային քաղաքականության փաստաթղթերն ընդհանուր առմամբ համապատասխանում են ՄԱԿ-ի ուղեցույցին, այդ քաղաքականությունների իրազեկումը, իրականացումն ու կիրարկումը ենթազգային մակարդակներում բավարար չեն:

Չորս երկրներից երեքն ունեն լծակներ միջոլորտային համակարգում և վերահսկում իրականացնելու համար, որը հնարավորություն է տալիս ուժեղացնել համակարգումը խնամքի ոլորտների միջև: Այդ համակարգման և վերահսկման մարմինները միշտ չէ, որ արդյունավետ են գործում, այդուհանդերձ՝

- Հայաստանում ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ մշտադիտարկելու բարեփոխումների իրականացումը՝ Երեխաների պաշտպանության հարցերով ազգային հանձնաժողովի հետ միասին:
- Գանան ունի Ավելի լավ խնամք երեխաների համար հանձնաժողով (ԱԽԵՀ):
- Մոլդովան ունի Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային խորհուրդ և համակարգող խորհուրդ Երեխաների շուրջօրյա խնամքի համակարգի բարեփոխման և ներառական կրթության զարգացման համար:

Յուրաքանչյուր երկրում ձևավորված է **ծառայությունների մատուցման** որոշակի հաջողված պրակտիկա՝ պետության կողմից ֆինանսավորվող այլընտրանքային խնամքի ծառայություններ մատուցող կազմակերպությունների մեծամասնությունը Հայաստանում և Մոլդովայում գրանցված են և հավաստագրված են իրավասու մարմինների կողմից: Հայաստանում ցերեկային խնամքի ծառայությունները, որոնք հիմնականում մատուցվում են ՀԿ-ների կողմից՝ նրանց հետ ունեցած սոցիալական պայմանագրերի շրջանակում, ավելի տարածված են դառնում և կառավարությունը ստեղծում է բազմապրոֆիլային ցերեկային խնամքի կենտրոններ մանկատների և շուրջօրյա խնամքի հաստատությունների փոխարեն: Մոլդովան ունի կարգավորված միջոլորտային համագործակցության մեխանիզմ, որի միջոցով բազմաոլորտային թիմերը համախմբվում են համայնքային մակարդակով՝ գնահատելու, ուղղորդելու, աջակցելու և մշտադիտարկելու ռիսկի տակ գտնվող երեխաներին: Գանան զարգացնում է ազգային շուրջօրյա խնամքի տները երեխաների համար և առաջընթաց է արձանագրել դրանց վերահսկման, լիցենզավորման և փակման հարցում: Ուգանդայում ՀԿ-ները նախաձեռնել և իրականացնում են խնամատարության փոքրածավալ ծրագրեր՝ ներկայացնելով հաջողված փորձի օրինակը կառավարությանը՝ հիմք ընդունելու համար: Բոլոր չորս երկրներն ունեն սոցիալական աջակցության ծառայությունների ցանկ՝ ընտանիքների ամրապնդման և ընտանիքից երեխաների բաժանումը կանխարգելելու համար, ինչպիսիք են՝ ծնողավարման հմտությունների վերապատրաստումը, ընտանեկան բռնության կանխարգելման ծրագրերը, տնային տնտեսության տնտեսական հզորացումը, կրթական և առողջապահական ծառայությունները, վաղ մանկության զարգացումն ու խնամքը և հոգեբանական աջակցությունը: Մոլդովան և Ուգանդան նույնպես մշակել են դեպքի վարման ուղեցույցներ:

Ծառայությունների մատուցումն ընդհանուր առմամբ ավելի թույլ է, քան կառավարում և առաջնորդում բաղադրիչը: Այն հետևականորեն չի զարգանում երկրներից և ոչ մեկում և ծառայությունների մեծամասնությունը մատուցվում է միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ և իրականացվում է ՀԿ-ների կողմից: Ընդհանուր առմամբ, դեպքի վարման համակարգերը թույլ են կամ ձևավորման փուլում են և չունեն հստակ ուղեցույցներ հաշմանդամություն ունեցող երեխաների կամ ֆորմալ խնամքի համակարգից դուրս գտնվողների հետ աշխատելու համար: Բոլոր չորս երկրներնում սահմանված չեն նաև ծառայությունների որակի չափանիշները և առկա է ծառայությունների որակի ոչ բավարար մշտադիտարկում, չունեն ընթացակարգեր այն դեպքերի համար, երբ սահմանված չափանիշները չեն պահպանվում:

Յուրաքանչյուր երկրում առկա են աշխատանքային նկարագրություններ **պետական սոցիալական աշխատողների** համար, քանի որ նրանք առնչվում են այլընտրանքային խնամքի ծառայությունների հետ: Այլընտրանքային խնամքի ծառայությունների հետ առնչվող բոլոր հիմնական կադրերի դերերն ու պարտականությունները հստակ սահմանված են (օրինակ՝ սոցիալական աշխատողների և երեխայի պաշտպանության մասնագետների) բոլոր չորս երկրներում:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է, որ հստակեցվեն կանխարգելման և վերամիավորման հետ կապված դերերի և համայնքային մակարդակի կառույցների դերերի բաշխումը Գանայում և Ուգանդայում, ինչպիսիք են համայնքային հանձնաժողովները և պարա-սոցիալական աշխատողները (օրինակ՝ վերահսկում իրականացնելու համար): Բացի այդ, որոշ երկրներում, թեև գոյություն ունեն ֆորմալ պաշտոններ (օրինակ՝ երեխաների իրավունքների պաշտպանության մասնագետներ տեղական մակարդակով Մոլդովայում), առկա է նաև կադրերի պակաս:

Որոշ երկրներ ունեն ինստիտուցիոնալացված վերապատրաստման մեխանիզմներ, մինչդեռ որոշ երկրներ բավական առաջ են անցել այս ուղղությամբ՝

- Հայաստանում Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը պատասխանատու է տեղական ինքնակառավարման սոցիալական աշխատողների ծառայության ընթացքում վերապատրաստման և կարողությունների զարգացման համար: Սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիան իրականացնում է դասընթացներ դեպք վարողների և համայնքային սոցիալական աշխատողների համար:

- Գանայում նախնական վերապատրաստումները տրամադրվում են հիմնականում համալսարանի սոցիալական աշխատանքի ծրագրերի միջոցով: Ծառայության ընթացքում վերապատրաստումները ոչ ֆորմալ են և կարող են տրամադրվել աշխատանքի ընթացքում ավագ աշխատակիցների կողմից:

- Մոլդովայում վերջերս ստեղծված Սոցիալական աշխատանքի ազգային գործակալությունը (ՍԱԱԳ) ստուգել է սոցիալական աջակցության ոլորտում աշխատողների թվաքանակը, հմտությունները և կարողությունները և պլանավորում է մշակել համակարգված ծառայության ընթացքում վերապատրաստման ծրագիր կարողությունների բարելավման համար:

- Ուգանդայում նախնական վերապատրաստումները իրականացվում են հիմնականում համալսարանի սոցիալական աշխատանքի ծրագրերի միջոցով: Ծառայության ընթացքում վերապատրաստումները սովորաբար մատուցվում են խոցելի երեխաների համար ՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրերի համատեքստում:

Չնայած այս նախաձեռնություններին, ինստիտուցիոնալացված վերապատրաստումը նվազագույն է, դոնորների աջակցությամբ ՀԿ-ների կողմից հաճախ տրամադրվող աջակցության համեմատ:

Ոչ մի երկրում չկա սահմանված առավելագույն ծանրաբեռնվածության մակարդակ դեպք վարողների և սոցիալական աշխատողների համար, չնայած այն սահմանված է խնամքի այլ ոլորտների համար (օրինակ՝ Հայաստանում և Մոլդովայում, դրանք սահմանված են շուրջօրյա խնամքի հաստատությունների և խնամատարության ծառայությունների համար):

Մշտադիտարկումն ու գնահատումը զարգացման փուլում են բոլոր չորս երկրներում և անհրաժեշտ է այն ուժեղացնել տեղեկատվություն տրամադրելու քաղաքականությանն ու ծառայությունների մատուցմանը: Յուրաքանչյուր երկիր սահմանել է որոշակի ցուցանիշներ այլընտրանքային խնամքի տարբեր ոլորտների համար և աշխատել է ստեղծել տվյալների բազաներ կամ տեղեկատվական համակարգեր դրանք պահելու համար: Օրինակ՝ Հայաստանը ունի Մանուկ տեղեկատվական համակարգ, Մոլդովան ունի Սոցիալական աջակցության ավտոմատ տեղեկատվական համակարգ (ՍԱԱՏՀ), իսկ Ուգանդան աշխատում է Remand Home կառավարման տեղեկատվական համակարգով: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է զարգացնել դեպքի վարման ցուցանիշները, խնամատարության ցուցանիշները, ապագա որդեգրող ծնողների ցուցանիշները և այլոք: Բոլոր չորս երկրներն ունեն տվյալների որակի ապահովման թույլ մեխանիզմներ և սահմանափակ միջոլորտային տվյալների փոխանակում, անհրաժեշտ տեղեկատվությունը պարբերաբար չի հավաքագրվում, իսկ առկա տեղեկատվությունը բացի հաշվետվություններում ներկայացվելուց, այլ կերպ չի օգտագործվում:

Չնայած երկրներից շատերն անց են կացրել իրազեկության բարձրացման քարոզարշավներ՝ խթանելու դրական **սոցիալական նորմերն ու գործելաոճը**, մասնավորապես, երեխաների ընտանեկան պաշտպանված միջավայրում մեծանալու կարևորության մասին, դրանցից շատերը իրականացվել են պահի թելադրանքով՝ ՀԿ-ների կողմից դոնորների ֆինանսավորմամբ: Ոչ մի երկրում չկա միասնական ծրագիր, որտեղ ներառված են այն առանցքային ուղերձներն ու ռազմավարությունը, թե ինչպես են դրանք հաղորդվելու հանրությանը, ուսուցիչներին, սոցիալական օգնականներին/ սոցիալական աշխատողներին, ինչպես նաև անմիջական ծառայություն մատուցողներին:

Երեխաների այլընտրանքային խնամքի **ֆինանսավորումը** բոլոր չորս երկրներում լուրջ խնդիր է: Նրանցից երեքում, երբ գործողությունների համար կազմվում է բյուջե, կառավարությունը հատկացնում է ֆինանսավորում դրանց համար: Սակայն, այս ծառայությունների համար ծախսերի հաշվարկները հաճախ կամ չեն կատարվում, կամ անհրաժեշտ միջոցներ ներառված չեն վերապատրաստման, մենթորության և այլ ծառայությունների համար: Որոշ օրինակներ են՝ ֆորմալ խնամակալությունը, խնամատարությունը, ընտանիքի վերամիավորումը ու հաստատություններից երեխաներին դուրսբերումը/ բեռնաթափումը: Ապակենտրոնացված համատեքստում շատ ծառայություններ պետք է ֆինանսավորվեն տեղական իշխանությունների կողմից, որոնք չունեն ոչ կարողություններ ծառայությունները բյուջետավորելու, ոչ էլ այդ ծառայությունների ֆինանսավորման հնարավորություններ:

Գնահատման արդյունքում դուրս բերվեցին նոր կարևոր կարիքներ, ինչպիսիք են՝ բոլոր ծառայությունների համար որակի չափանիշների մշակումը և մշտադիտարկման իրականացումը; սոցիալական նորմերի քարոզարշավների համակարգումը; ծախսերի ռազմավարության մշակումը՝ ծառայությունների մատուցման համարժեք ֆինանսավորում ապահովելու համար; տեղեկատվության պահանջարկի բարձրացումը; և տեղեկատվական համակարգերի հզորացումը, մասնավորապես դեպքի վարման տեղեկատվական համակարգերը:

Ի՞ՆՉ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՒՄ Է ԽՆԱՄՔԻ ՈԼՈՐՏՆԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ

Կանխարգելում՝ Հայաստանը, Գանան և Մոլդովան ունեն գործող սոցիալական պաշտպանության մեխանիզմ սոցիալապես անապահով ընտանիքների համար, սակայն այստեղ հստակ ընդգծված կամ նշված չէ ընտանիքից երեխայի բաժանման կանխարգելումը: Որոշ ծառայություններ շատ սահմանափակ են կամ թույլ, հատկապես ժամանակավոր խնամքի ծառայությունները, ալկոհոլի չարաշահման դեպքերին արձագանքումը, և հաշմանդամություն ունեցող երեխաների և խնամակալների համար ծառայությունները: Համակարգումը պետական գերատեսչությունների միջև, որոնք իրականացնում են կանխարգելման ծրագրեր օպտիմալ չեն բոլոր չորս երկրներում: Գոյություն ունեն որոշ սպասարկման ստանդարտներ, բայց դրանց որակի մշտադիտարկումը թույլ է և հստակ չեն ընթացակարգերը այդ ստանդարտները չպահպանելու դեպքում: Բոլոր չորս երկրներում համաձայնություն է ձեռք բերվել, որ պետք է ուժեղացվեն կանխարգելման ծառայությունների բյուջետավորումը, բաշխումը և ֆինանսավորումը:

Խնամատարության կարգավիճակը զգալիորեն տարբերվում է չորս երկրներում: Հայաստանը վերջերս մշակել է օրենսդրություն խնամատարության չորս տեսակների համար՝ ընդհանուր, մասնագիտացված, ճգնաժամային և ժամանակավոր: Օրենսդրությունը նույնպես սահմանում է երեխաների խնամատար ընտանիքներին համապատասխանեցնելու չափանիշների մշակման անհրաժեշտությունը: Այս գնահատման ընթացքում մասնակիցները նշեցին, որ այդ նոր օրենսդրությունը լրամշակման կարիք ունի, որպեսզի համապատասխանեցվի ՄԱԿ-ի ուղեցույցի պահանջներին, հատկապես, որպեսզի խնամատարության տակ գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաներին տրմադրվի մասնագիտացված աջակցության ծառայություններ: Գանայում խնամատարության մասին օրենսդրությունը և համապատասխան ֆորմալ ծառայությունների մատուցումը ձևավորման փուլում են: Մոլդովայում խնամատարության ծառայությունների կազմակերպումը իրականացվում է տեղական իշխանությունների կողմից, և բոլոր խնամատարները վճարվում են, սակայն գրեթե ոչ մի հատուկ աջակցման ծառայություններ գոյություն չունեն հաշմանդամություն ունեցող երեխաների և այլ հատուկ կարիքներ ունեցող երեխաների խնամատարների համար: Մոլդովայի կառավարությունը նախատեսում է խնամատարության համար ֆինանսավորումը մտցնել սոցիալական ծառայությունների նվազագույն փաթեթի մեջ, որը տրամադրվում է մարզերին պետության կողմից: Ուգանդայում խնամատարությունը հիմնականում ոչ ֆորմալ է և իրականացվում է ՀԿ-ների ծրագրերի միջոցով՝ չունենալով բավարար մշտադիտարկում կառավարության կողմից:

Շուրջօրյա խնամքը տարբեր է երկու տարածաշրջաններում՝ Գանայում և Ուգանդայում գրեթե բոլոր շուրջօրյա խնամքի ծառայությունները տրամադրվում են ոչ պետական դերակատարների կողմից, որոնցից շատերը լիցենզավորված չեն կամ չունեն պետական գրանցում: Չնայած գոյություն ունեն որակի չափանիշներ, սակայն դրանք գրեթե չեն կիրառվում, նույնիսկ գրանցված հաստատությունների կողմից: Հայաստանում և Մոլդովայում շուրջօրյա խնամքի հաստատությունները վերահսկվում են նախարարությունների կամ տեղական մարմինների կողմից, կախված հաստատության տեսակից: Այդ երկրներում մեծ հաստատությունները նվազել են քանակով և հնարավորինս չափ փոխարինվել են համայնքային և ընտանիքի տիպի խնամքի տեսակով: Մոլդովայում մեծ քանակությամբ շուրջօրյա խնամքի հաստատությունները փոխարինվել են ընտանեկան տիպի խնամքով և կտրուկ նվազել է շուրջօրյա խնամքի հաստատություններում գտնվող երեխաների թվաքանակը: Այնուամենայնիվ, 0-ից 3 տարեկան

երեխաները դեռևս տեղավորվում են շուրջօրյա խնամքի հաստատություններում, և գոյություն ունեցող մեծածավալ շուրջօրյա խնամքի հաստատությունները հիմնականում հաշմանդամություն ունեցող և հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար են և լավ չեն կարգավորվում:

Յուրաքանչյուր երկիր օրենսդրության կամ այլ քաղաքական փաստաթղթերի միջոցով պլանավորում է բեռնաթափել մեծածավալ շուրջօրյա խնամքի հաստատությունները, սակայն նման հաստատությունների հստակ սահմանում չկա: Հայաստանում և Մոլդովայում բեռնաթափումը տեղի է ունենում արդեն մի քանի տարի շարունակ: Մտահոգիչ է, որ Մոլդովան միակն է չորս երկրներից, որն ունի ուղեցույց հաստատությունների փակման և երեխաներին ընտանիքներում տեղավորելու վերաբերյալ:

Բոլոր չորս երկրներն ունեն իրավական/ քաղաքական դաշտ **վերամիավորման և մերձեցման** ծառայությունների մատուցման համար, սակայն գոյություն չունեն ոչ մի չափանիշներ վերամիավորման կամ մերձեցման համար: Բացի այդ, վերամիավորման դեպքի վարումը լավ չի հիմնադրված կամ վերահսկվում: Բացի Մոլդովայից, որտեղ ցուցանիշները օգտագործվում են մի շարք մարզերում վերամիավորված երեխաներին հետևելու համար, մյուս երեք երկրներում դրանց կիրառումը սահմանափակ է կամ լիովին բացակայում է: Հայաստանում, Գանայում և Ուգանդայում վերամիավորման և մերձեցման աջակցությունը առավել հաճախ տրամադրվում է ոչ պետական դերակատարների կողմից, ինչը բերում է նրան, որ այդ ծառայությունները անհավասար են տրամադրվում այս երկրներում և չկա շարունակականություն, քանի որ աջակցությունը կախված է դոնորների ֆինանսավորումից: Մոլդովայում տեղական իշխանությունների կողմից վարձատրվող սոցիալական աշխատողներին է տրված այս պարտականությունը, սակայն նրանք հազվադեպ են այն կատարում ծանրաբեռնվածության պատճառով:

Ինչ վերաբերում է **որդեգրմանը,** Հայաստանը, Գանան և Մոլդովան 1993 թ. բոլորը ստորագրել են Հաագայի կոնվենցիան Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին: Ուգանդան դեռևս չի ստորագրել: Այդ երկրներից յուրաքանչյուրն ունի ազգային ռեգիստր, որտեղ գրանցվում են որդեգրումները (որոշը էլեկտրոնային, որոշը թղթային տարբերակով), բայց այդ համակարգերը ոչ բոլորն են լավ աշխատում: Գնահատումը բացահայտեց, որ հիմնական մտահոգությունները կապված են որդեգրման կազմակերպման որակի չափանիշների բացակայության հետ, որդեգրման ծառայությունների ամբողջական արժեքի հաշվարկի բացակայության հետ, որդեգրումից առաջ և որդեգրման գործընթացի ընթացքում երեխաներին և ապագա որդեգիր ծնողներին ոչ բավարար աջակցության տրամադրման, ինչպես նաև որդեգրումից հետո սահմանափակ մշտադիտարկման հետ՝ հատկապես ներքին որդեգրումների ժամանակ:

Բոլոր չորս երկրներում շատ քիչ աշխատանք է իրականացվել կառավարության կողմից **ոչ ֆորմալ խնամակալության** և **ուղեկցվող անկախ ապրելակերպի** ուղղությամբ, սակայն երկրները ընդունում են, որ անհրաժեշտ է իրավական/ քաղաքական դաշտ՝ առաջնորդելու սույն ծառայությունների մատուցումը:

Ինքնագնահատումները խթանեցին ուսումնասիրել այլընտրանքային խնամքի այն ոլորտները, որոնք նախկինում բավարար ուշադրության էին դարձվել, ներառյալ ոչ ֆորմալ խնամակալությունը, ուղեկցվող անկախ ապրելակերպը, վերամիավորման մշտադիտարկումը, երեխային ահյլընտրանքային խնամքի գրեթե բոլոր տեսակներին հանձնելուց հետո աջակցության ծառայությունների մատուցումը, հաշմանդամություն ունեցող երեխաների մասնագիտացված դեպքի վարումը և հաշմանդամություն ունեցող խնամակալների համար աջակցության ծրագրերը:

ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքնագնահատման աշխատաժողովների ժամանակ, մասնակիցները որոշակի նախնական առաջարկություններ ներկայացրեցին վերհանված խնդիրներին արձագանքելու համար: Չորս երկրներում միասին վերցրած ներկայացվեցին 224 առաջարկություններ՝ Հայաստանից 54, Գանայից 30[3], Մոլդովայից 88[4], Ուգանդայից 52: Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է առաջարկությունների բաշխումը դասակարգված ըստ **համակարգի բաղադրիչների**:

Պատկեր 2. Առաջարկություններն ըստ համակարգի բաղադրիչի և երկրների



ԿԱ = Կառավարում և առաջնորդում, ԾՄ = Ծառայությունների մատուցում, ՄԳ = Մշտադիտարկում և գնահատում

[3] Գանան անց է կացրել միավորման գործողություն ԵՀԹ-ի հետ միասին՝ նվազեցնելու սկզբնական ցուցակի թիվը, որը 50-ից ավելի էր

[4] Նվազել է 94-ից

Առաջարկություններ համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի համար՝ խմբավորված երեք կամ չորս թեմաների, ինչպես ներկայացված է ստորև աղյուսակում՝

Աղյուսակ 1՝ Առաջարկություններ այլընտրանքային խնամքի համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի վերաբերյալ

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ						
ՄՈՂՈՎԻՆ	**Կառավարում և առաջնորդում (57)**	**Ծառայությունների մատուցում (67)**	**Աշխատուժ (35)**	**ՄԳ (33)**	**Սոցիալական նորմեր (13)**	**Ֆինանսավորում (33)**
ԹԵՐԱԿԱՆ	Մշակել ուղեցույցներ և/ կամ քաղաքականություն (24)	Մշակել նոր ընթացակարգեր և որակի երաշխիքներ (31)	Անցկացնել վերապատրաստում (20)	Բարելավել ՄԳ գործընթացները (17)	Բարելավել սոցիալական նորմերի իրազեկվածությունը (6)	Հաշվարկել ծախսերը (12)
	Ուժեղացնել կառավարման մարմինները (14)	Ուժեղացնել ծառայությունների մատուցումը (25)	Մշակել որակի չափանիշներ, պահանջներ աշխատուժի համար (12)	Մշակել կամ զարգացնել էլեկտրոնային լուծումները (9)	Մշակել հաղորդակցման և շահերի պաշտպանության ռազմավարությունները (4)	Զարգացնել կարողությունը (8)
	Բարելավել իրավական փաստաթղթերը (13)	Ապահովել արդարացի իրականացում համայնքային մակարդակով (11)	Աշխատուժի պահպանում և ընդունում (3)	Մշակել/ բարելավել ցուցանիշները (7)	Ուսումնասիրել սոցիալական նորմերի իրավիճակը երկրներում (2)	Ֆինանսական այլ խնդիրներ (13)
	Համապատասխանեցում կենտրոնական և տեղական իշխանությունների միջև/ համապատասխանեցում ՀԿ-ների հետ (6)				Բարելավել սոցիալական նորմերի վերաբերյալ քարոզարշավների ֆինանսավորումը (1)	

Այլընտրանքային **խնամքի ոլորտներին** վերաբերող առաջարկություններից գրեթե կեսը հանդիսանում են խաչվող հարցեր և գրեթե հավասարապես ներկայացնում են համակարգի վեց բաղադրիչները: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է առաջարկությունների բաշխումն ըստ մնացած առանձին խնամքի ոլորտների՝ նշելով, թե համակարգի որ բաղադրիչին են ուղղված առաջարկությունների մեծամասնությունը:

Աղյուսակ 2. Առաջարկությունների խմբավորումն ըստ համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի և խնամքի ոլորտի

Խնամքի ոլորտ	Առաջարկությունների քանակը	Վերաբերում է հիմնականում համակարգի հետևյալ բաղադրիչին՝
Երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխումը	25	Ծառայությունների մատուցում
Խնամատարություն	24	Ծառայությունների մատուցում
Խնամակալություն	19	Հավասար բաշխում բաղադրիչներով
Խնամք հաստատությունում	15	Կառավարում և առաջնորդում Ծառայությունների մատուցում
Որդեգրում	14	
Հաստատություններից երեխաների դուրսբերում	14	Հավասար բաշխում բաղադրիչներով
Ուղեկցվող անկախ ապրելակերպ	5	Կառավարում և առաջնորդում

Ինքնագնահատումները արժեքավոր էին յուրաքանչյուր երկրի համար: Մոլդովայում և Հայաստանում առաջնահերթություն տրված առաջարկությունները որպես գործողություններ կավելացվեն գոյություն ունեցող միջոցառումների ծրագրերին: Գանայում Սոցիալական ապահովության վարչությունը ավելացրեց գործողությունների պլանի մշակումը իր աշխատանքային պլանին՝ հիմնվելով ինքնագնահատման և այլ բացահայտումների վրա: Ուգանդայում առաջարկությունները կավելացվեն որպես գործողություններ Երեխաների պաշտպանության ազգային քաղաքականության իրականացման ծրագրում, որը մշակման փուլում է և կկիրառվի այլընտրանքային խնամքի գոյություն ունեցող գործողությունների ծրագրի վերանայման համար:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Ինքնագնահատումն անցկացնելուց հետո, MEASURE Evaluation խրագիրն աջակցեց հիմնական պետական գերատեսչություններին կամակերպել աշխատանքային հանդիպում՝ առաջնահերթություններ սահմանելու և գործողությունների ծրագիր մշակելու նպատակով: Չնայած երկրները փոքր-ինչ տարբեր մեթոդներ էին կիրառել, յուրաքանչյուր աշխատաժողովին մասնակցել էին մեծ քանակով ներկայացուցիչներ նախարարություններից, պետական և ոչ պետական դերակատարներ, հիմք են ընդունվել գոյություն ունեցող ռազմավարություններն ու գործողությունների ծրագրերը (առկայության դեպքում) և առաջնահերթություններ են սահմանվել համաձայնության գալով: Առաջնահերթություն սահմանելու չափանիշներն են եղել խնդրի հրատապությունը, հնարավոր ազդեցությունը, մատչելիությունը և հաջողության հավանականությունը: Յուրաքանչյուր չափանիշին տրված կարևորությունը տարբեր է եղել ամեն մի երկրում:

Որոշ երկրներում առաջին անգամ էր, որ նման ժողովրդավարական, մասնակցային մոտեցում էր կիրառվել երեխաների խնամքի և պաշտպանության խնդիրների վերաբերյալ լուծումներ առաջարկելու համար: Հայաստանում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հարմարեցրել է այս ինքնագնահատման գործիքը ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի մասնակցային գնահատումն Երևանում և երկու մարզերում անցկացնելու համար: MEASURE Evaluation ծրագիրը նույնպես աջակցում է գնահատման արդյուքների տարածմանը, ներառյալ դոնորների հետ հանդիպումները՝սահմանելու աջակցության ոլորտները:

ՀԱՎԵԼՎԱԾ՝ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ

Հայաստանում, առաջնահերթությունների սահմանման գործընթացից հետո, MEASURE Evaluation ծրագիրը կազմակերպեց հանդիպում ԵՀԹ-ի և հիմնական շահագրգիռ կողմերի հետ՝ վերանայելու առաջանահերթություն ստացած առաջարկությունները գործողությունների ծրագրի մշակման համար։ Երկրի համար այժմ առանձացված են ութ կարևոր առաջարկություններ: Գործողությունների ծրագրի մշակումն ու իրականացումը ներկայումս դադարեցված է մինչև որ նոր նախարարը կնշանակի ԵՀԹ համակարգող։

Առաջարկությունները հետևյալն են՝

1. Ստեղծել միջգերատեսչական համակարգող հանձնաժողով իր մարզային ենթահանձնաժողովներով՝ բարելավելու միջգերատեսչական համագործակցությունը, կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների կարիքներին նպատակային արձագանքելու և համապատասխան օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկներ մշակելու համար։

2. Մշակել համապարփակ ձեռնարկ այլընտրանքային խնամքի կազմակերպման և տրամադրման վերաբերյալ, ապահովելով այլընտրանքային խնամքի բոլոր ոլորտներում համապատասխան կադրերի/մասնագետների նույն սկզբունքներով և մոտեցումներով վերապատրաստումները, ծառայությունների որակի ապահովումը, հատուկ ուշադրություն դարձնելով կանխարգելման/ ընտանիքի վերամիավորման, ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպման և հաստատություններից երեխաների դուրսբերման ծառայություններին:

3. Վերանայել համայնքային սոց աշխատողների և խնամակալության հոգաբարձության հանձնաժողովների/մարմինների պաշտոնի անձնագրերն ու աշխատանքի նկարագրերը՝ հստակեցնելու նրանց դերն ու պարտականությունները երեխաների ընտանիքից առանց անհրաժեշտության բաժանումը կանխարգելելու և ընտանիքների վերամիավորումը համակարգելու, այլընտրանքային խնամք ստացող երեխաներին մշտադիտարկելու գործընթացներում։

4. Կազմակերպել անհրաժեշտ ծառայությունների կարիքի և ֆինանսավորման գնահատում՝ ներքին փորձագետների միջոցով, մասնավորապես գնահատելով ընտանիքներին աջակցող համայնքահենք ծառայությունների ստեղծման և զարգացման, երեխաների առանց անհրաժեշտության ընտանիքից բաժանումը կանխելուն և ընտանիքների վերամիավորման, ֆորմալ խնամակալության հաշվառման համակարգի ձևավորման, խնամակալների համար խորհրդատվական ծառայությունների ստեղծման, այլընտրանքային խնամքից դուրս եկող երեխաների համար անկախ ապրելակերպի ծառայությունների զարգացման, ճգմնաժամային, ժամանակավոր խնամքի ծառայությունների ստեղծման, 0-3 տարեկան երեխաների համար այլընտրանքային ընտանեկան տիպի խնամքի ծառայությունների ստեղծման ծառայությունների համար անհրաժեշտ ֆինանսավորումը։

5. Մշակել այլընտրանքային խնամքի համակարգի բաղադրիչների մասին հանրային իրազեկման ռազմավարություն։

6. Բարելավել միջգերատեսչական տեղեկատվության փոխանակումը և տեղեկատվական համակարգերի ներդաշնակեցումը, այլընտրանքային խնամքի ծառայությունների համար միասնական ՄԵԳ համակարգի ձևավորումը:

7. Վերանայել ներկայիս օրենսդրությունը և մշակել իրավական ակտեր՝ հիմք ընդունելով կառավարում և առաջնորդում բաղադրիչի համար կատարած հիմնական առաջարկությունները:

8. Վերապատրաստել երեխաների հարցերով զբաղվող դատավորներին երեխայի լավագույն շահի և երեխայի պաշտպանության հարցերի շուրջ:

Գանայում գնահատման աշխատաժողովի ընթացքում խմբերը ներկայացրեցին առաջարկներ համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի և խնամքի յուրաքանչյուր տեսակի համար: Այս առաջարկությունները և նրանք, որոնք առաջադրվել են աշխատաժողովից հետո, երբ մենք վեր էին լուծում բացահայտումները, ներկայացված են ստորև՝

1. Վերականգնել այլընտրանքային խնամքի բազմաոլորտային վերահսկողության մարմինը (օրինակ՝ Ավելի լավ խնամք երեխաների համար հանձնաժողովը)՝ վերանայելով դրա անդամակցումը և տեխնիկական բնութագիրը և պլանավորելով և ֆինանսավորելով կանոնավոր հանդիպումները ազգային և տարածաշրջանային մակարդակներում

2. Ստեղծել և աջակցել Սոցիալական ապահովության ազգային վարչության (ՍԱՎ) խնամատարության բաժինը և մարզային խնամատարության տեղավորման հանձնաժողովները:

3. Ստեղծել ուղեցույցներ՝ որոշելու երեխաների լավագույն շահերը և նրանց տեղավորումը այլընտրանքային խնամքի տակ (վերահսկման մեխանիզմներ):

4. Վերապատրաստել բոլոր համապատասխան պետական և ոչ պետական դերակատարներին խնամատարության և որդեգրման նոր կանոնակարգերի վերաբերյալ խորհրդարանի ընդունումից հետո:

5. Վերանայել «Շուրջօրյա խնամքի տներ երեխաների համար» ազգային չափանիշները՝ 0-ից 3 տարեկան երեխաներին միայն բացառիկ հանգամանքներում շուրջօրյա խնամքի տեղավորելու համար և ապահովելու վաղ մանկական բաժանմունքների, ժամանակավոր կացարանների, «ընտանիքի տիպի» խմբային տների, շուրջօրյա հատուկ դպրոցների և մասնագիտացված վերականգնողական ծառայությունների տրամադրումը:

6. Մշակել ուղեցույցներ և չափանիշներ՝ մշտադիտարկելու ընտանեկան միջավայրում խնամվող երեխաներին, ներառյալ խնամակալությունը, խնամատարությունը, որդեգրումը, ուղեկցվող անկախ ապրելակերպը և վերամիավորումը և զարգացնել սոցիալական ապահովության վարչության աշխատակիցների կարողությունները այդ չափանիշների վերաբերյալ:

7. Որդեգրման ու խնամատարության կանոնակարգերը պետք է ընդունվեն Խորհրդարանի կողմից:

8. Հարմարեցնել վերամիավորման և մերձեցման միջազգային ուղենիշները Գանայի կոնտեքստին և վերապատրաստել բոլոր համապատասխան պետական և ոչ պետական դերակատարներին վերամիավորման և մերձեցման վերաբերյալ։

9. Աջակցել երեխաների շուրջօրյա խնամքի տների լիցենզավորման և փակման նոր հնգամյա ծրագրի իրականացումը Գանայում։

10. Իրականացնել կանոնավոր համատեղ ստուգումներ և մշտադիտարկման այցեր երեխաների շուրջօրյա խնամքի տներ լիցենզավորման համար կամ փակելու այն հաստատությունները, որոնք պահանջվող չափանիշներին չեն համապատասխանում։

11. Ուժեղացնել ՄԳ համակարգի իրականացումը ֆորմալ այլընտրանքային խնամքի տակ գտնվող երեխաների համար։

12. Աջակցել Երեխայի պաշտպանության գործիքակազմի տարածմանը (մասնավորապես, այլընտրանքային խնամքի վերաբերյալ լրացուցիչ մոդուլը) և համայնքային ներգրավումը ամենաբարձր պահանջարկ ունեցող տարածքներում։

13. Մշակել երեխաների համար մատչելի նյութեր՝ բարձրացնելու երեխաների իրազեկվածությունը իրենց իրավունքները մասին։

14. Վերապատրաստել համապատասխան պետական և ոչ պետական աշխատակիցներին՝ դեպքի վարման նոր ստանդարտ ընթացակարգերի վերաբերյալ։

15. Մշակել խնամակալի վերապատրաստման ձեռնարկ, որը կներառի ծնողավարման հմտություններ, որոնք կօգնեն կանխել անհարկի բաժանումը։

16. Աջակցել վաղ մանկության զարգացման և խնամքի ծառայությունների (ցերեկային խնամքի կենտրոնների) մշտադիտարկման և վերահսկման մեխանիզմներին՝ հիմնվելով վերջերս մշակված չափանիշների վրա։

17. Սատարել ուղեգրման մեխանիզմները պետական և ոչ պետական դերակատարների միջև կանխարգելիչ և արձագանքման ծառայությունների համար։

18. Իրականացնել քարտեզագրում կանխարգելման և արձագանքման ծառայությունների համար։

19. Թարմացնել որդեգրման գրանցամատյանը՝ այն դարձնելով ամբողջովին էլեկտրոնային և ներառելով անվտանգության միջոցներ՝ երեխաների և ապագա որդեգիր ծնողների անուններն ու զգայուն տեղեկատվությունը պաշտպանելու համար։

20. Մշակել ուղեցույցներ երեխաների շուրջօրյա խնամքի տների համար՝ փոխակերպելու նրանց գործունեությունը շուրջօրյա խնամքից ընտանիքի ամրապնդմամբ և ընտանեկան խնամքով։

21. Վերանայել բոլոր համապատասխան աշխատողների որակավորումները/ աշխատանքային նկարագրերը՝ապահովելու, որ այլընտրանքային խնամքի բոլոր ոլորտները ներառված լինեն, և մշակել վերապատրաստման ծրագրեր հաշմանդամություն ունեցող երեխաների,

ծնողավարման հմտությունների, տնտեսական հզորացման և սոցիալական պաշտպանության ծառայությունների մատչելիության վերաբերյալ աշխատողների կարողությունների զարգացման համար:

22. Վավերացրել փորձարկվող վերաինտեգրման ձևերը և տարածել դրանք բոլոր մարզերում:

23. Վերանայել և իրականացնել սոցիալական ապահովության վարչության կողմից մշակված շահերի պաշտպանության և հաղորդակցման ռազմավարությունը և անցկացնել իրազեկման բարձրացման գործողություններ, որոնք հասնում են այլընտրանքային խնամքում ներգրավված դերակատարներին և հանրությանը:

24. Մոբիլիզացնել ֆինանսավորումը իրազեկման բարձրացման գործողությունների համար:

25. Իրականացնել հետազոտություն այլընտրանքային խնամք ստացող երեխաների վերաբերյալ:

26. Իրականացնել ծախսերի հաշվարկներ այլընտրանքային խնամքի վերաբերյալ տեղական, մարզային և ազգային մակարդակներում:

27. Մշակել ուղեցույցներ մարզային աշխատողների համար բյուջետավարման ընթացակարգերի վերաբերյալ և սահմանել համակարգված ճանապարհ՝ ներառելու այլընտրանքային խնամքի բոլոր ոլորտները միջնաժամկետ ծախսերի շրջանակում (2017 թ. Ազգային զարգացման պլանավորման հանձնաժողով):

28. Բանակցել այլընտրանքային խնամքի համար պետական ֆինանսավորման հատկացման և տրամադրման համար, ներառյալ պետական շուրջօրյա խնամքի հաստատությունների և բեռնաթափման գործընթացի համար:

29. Բարելավել մեխանիզմներ՝ հետևելու ՀԿ-ների ֆինանսական ներդրումները այլընտրանքային խնամքում:

30. Ուղղորդել դոնորներին և մասնավոր հատվածին՝ վերահասցեագրելու գումարները դեպի ընտանեկան խնամք և ընտանիքի ամրապնդման աշխատանքներ:

Մոլդովայում, առաջնահերթությունների սահմանումից հետո, MEASURE Evaluation ծրագիրը խմբավորեց և միավորեց դրանք 13 ընդհանուր առաջարկությունների: Գործողությունների ծրագիրը մշակվել է Առողջապահության, աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության (ԱԱՊՆ) Ընտանիքի և երեխաների իրավունքների պաշտպանության վարչության կողմից: MEASURE Evaluation ծրագրի աջակցությամբ, ԱԱՊՆ-ն անցկացրեց ազգային համաժողով (http://msmps.gov.md/ro/content/evaluarea-reformei-sistemului-de-ingrijire-copilului-republica-moldova-discutata-de-catre) և հանդիպում դոնորների հետ 2018 թ.-ի հունիսի 19-ին՝ խնդրելու աջակցություն ցուցաբերել գործողությունների ծրագրի տարրերի իրագործման համար: ԱԱՊՆ-ն ներառել է այդ տարրերը իր ներկայիս գործողությունների ծրագրում:

Ընդհանուր առաջարկություններն են՝

1. Վերանայել և փոփոխել այլընտրանքային խնամքի որոշակի ոլորտների իրավական և ընթացակարգային շրջանակները:

2. Զարգացնել մարզային/ տեղական իշխանությունների ռազմավարական և գործառնական կարողությունները ռիսկի տակ գտնվող երեխաներին համապատասխան աջակցություն տրամադրելու համար՝ ռազմավարություն, ծառայությունների մատուցում և ֆինանսական կանխատեսում:

3. Բարելավել որակի երաշխիքները երեխայի այլընտրանքային խնամքի տրամադրման համար՝ հավատարմագրում, որակի վերանայումներ և գնահատումներ:

4. Էլ ավելի զարգացնել խնամատարության ծառայությունները՝մատչելիություն և մասնագիտացում:

5. Շարունակել շուրջօրյա խնամքի համակարգի բարեփոխումները՝միջգերատեսչական համակարգում, իրավական դաշտ, վերահսկողություն, մշտադիտարկում և վերահսկում:

6. Ավելի լավ կարգավորել ֆորմալ խնամակալությունը և համապատասխան ծառայությունների մասնագիտացումը՝ստանդարտներ, ծառայություններ և մշտադիտարկում:

7. Բարելավել կարգավորող իրավական դաշտը և աջակցությունը ոչ ֆորմալ խնամակալության տակ գտնվող երեխաների համար՝օրենսդրություն, ծառայություններ և վերահսկողություն:

8. Զարգացնել ուղեկցվող անկախ ապրելակերպը որպես երեխայի խնամքի այլընտրանքային ձև՝ իրավական դաշտ և ծառայություններ:

9. Բարելավել ընդհանուր ընտանիքի վերամիավորման և մերձեցման շրջանակները՝ ընթացակարգեր, չափանիշներ, մշտադիտարկում, ֆինանսավորում:

10. Բարելավել որդեգրման և համապատասխան ծառայությունների կարգավորող իրավական դաշտը ՝ստանդարտներ, ծառայության մասնագիտացում, որդեգրումից հետո օրենսդրություն և հաշվետվողականություն:

11. Մշակել և իրականացնել այլընտրանքային խնամքի համապատասխան մարդկային ռեսուրսների զարգացման քաղաքականություն՝ մոտիվացիա, պահպանում և վերապատրաստում:

12. Ուժեղացնել այլընտրանքային խնամքի համակարգի ՄԳ-ը՝մշտադիտարկման ցուցանիշներ, տեղեկատվական համակարգեր և կարողությունների զարգացում:

13. Նպաստել դրական սոցիալական նորմերի ձևավորմանը երեխայի այլընտրանքային խնամքի վերաբերյալ՝ իրազեկում և շահերի պաշտպանություն:

Ուգանդայում գնահատման զեկույցի առաջարկությունները վերանայվել են կառավարության այլընտրանքային խնամքի գործող ռազմավարությունների և պլանների առաջարկությունների հետ միասին, որոնք բոլորն էլ վերախմբավորվել են և ներկայացվել են առաջնահերթությունների սահմանման և գործողությունների պլանավորման աշխատաժողովի ժամանակ: Ընդհանուր առմամբ, առաջնահերթություն է տրվել 34 առաջարկություններին և մշակվել է գործողությունների ծրագիր: ՅՈՒՆԻՍԵՖ-ը Գենդերի, աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարության (ԳԱՍԶՆ) հետ համագործակցությամբ կազմակերպել է այլընտրանքային խնամքի շահագրգիռ կողմերի հանդիպում, որի ընթացքում հաստատվեց գործողությունների ծրագիրը, համաձայնության եկան գործողությունների իրականացման ժամկետների վերաբերյալ և տեղի

ունեցան ծախսերի պլանավորման նախնական քննարկումներ։ ՅՈՒՆԻՍԵՖ-ը առաջարկեց աջակցել ԳԱՍԶՆ- ին՝ հաշվարկելու գործողությունների ծրագրի արժեքը։

Առաջարկությունները հետևյալն են՝

1. Տարածել այլընտրանքային խնամքին վերաբերող տարբեր քաղաքականություններն ու օրենքները բոլոր մակարդակներում ամբողջ երկրով մեկ։

2. Բոլոր համայնքներում ստեղծել այլընտրանքային խնամքի հանձնաժողովներ և ապահովել դրանց ֆունկցիոնալությունը։

3. Մշակել և իրականացնել համապարփակ բեռնաթափման ռազմավարություն, որը կներառի ընթացակարգեր շուրջօրյա խնամքի հաստատությունների փակման և/ կամ վերափոխման վերաբերյալ։

4. Ուժեղացնել առկա իրավական և քաղաքական շրջանակների իրականացումը։

5. Արգելել նոր շուրջօրյա խնամքի հաստատությունների ստեղծումն ու լիցենզավորումը և փակել այն հաստատությունները, որոնք չեն համապատասխանում նվազագույն չափանիշներին համաձայն Երեխաների (հաստատված տների) կանոնների (2013)։

6. Ուժեղացնել ազգային այլընտրանքային խնամքի իրականացման կառույցի (ԱԽԻԿ) կարողությունները՝ Ուգանդայում երեխաների խնամքի և պաշտպանության բարեփոխումներն ավելի լավ առաջնորդելու, պլանավորելու, իրականացնելու և մշտադիտարկելու համար։

7. Վերանայել այլընտրանքային խնամքի ազգային օրենսդրությունը և ապահովել, որ այն համապատասխանի ՄԱԿ-ի երեխաների այլընտրանքային խնամքի մասին ուղեցույցին, ներառյալ ընտանիքի ամրապնդման և ընտանեկան անհարկի առանձնացման կանխարգելման ոլորտները։

8. Ապահովել անկախ պաշտոնական բողոքարկման մեխանիզմներ՝ապահովելու, որ այլընտրանքային խնամքի մեջ գտնվող երեխաները կարող են անվտանգ կերպով հայտնել չարաշահումների ու շահագործման մասին։ Մասնավորապես, պետք է մշակվեն համապատասխան անկախ և մատչելի զեկուցման մեխանիզմներ երեխաների չարաշահումների մասին հայտարարելու համար և պետք է արդյունավետ և ճիշտ ժամանակին վերահսկվեն իշխանությունների կողմից։

9. Մշակել որակի նվազագույն չափանիշներ բոլոր այլընտրանքային խնամքի ծառայությունների համար (ներառյալ խնամատարությունն ու որդեգրում) և ապահովել ծառայություններ մատուցողների ավելի լավ մշտադիտարկում։

10. Մշակել մանրամասն չափորոշիչներ և ուղեցույցներ խնամատարության և որդեգրման ծառայությունների մատուցման համար և վերապատրաստել համապատասխան դերակատարներին այդ թեմաներով։

11. Աջակցել երեխաների այլընտրանքային խնամքի հաստատություններից իրենց ընտանիքներ վերադառնալու բացահայտման, փաստաթղթավորման, վերահսկման և կայուն մերձեցման գործընթացներում։

12. Հզորացնել երեխաների տան վերահսկման և կարգավորման տեղական իշխանությունների կարողությունները։

13. Ամփոփել և տարածել դեպքի վարման ուղեցույցը՝ ապահովելու խնամքի պլանավորման համակարգվածությունը։

14. Մշակել ապագա որդեգիր ծնողների գրանցամատյան և հիմնել հստակ ուղղորդման մեխանիզմներ՝ ապահովելու աջակցություն ապագա որդեգիր ծնողներին։

15. Ուժեղացնել համայնքահեն մեխանիզմները ապագա խնամատարների հայտնաբերման և հաստատման համար։

16. Մշակել և իրականացնել մեխանիզմներ՝ աջակցելու երեխաներին, ովքեր դուրս են եկել խնամքից և տրամադրել աջակցություն խնամքից հետո։

17. Ընդլայնել ընտանիքների ամրապնդման և ռիսկի տակ գտնվող ընտանիքների աջակցության ծառայությունները (օրինակ՝ երեխաների նկատմամբ զգայուն սոցիալական պաշտպանության համակարգերը, ծնողավարման կրթությունն ու աջակցությունը, տնային տնտեսության տնտեսական զարգացումը)։

18. Մշակել և իրականացնել համապարփակ մասնագիտական ուսուցման ծրագիր՝ կողմնորոշելու պրոբացիոն և սոցիալական ապահովության աշխատակիցներին և այլ ծառայողական աշխատողներին (ոստիկանություն, տեղական ղեկավարներ) այլընտրանքային խնամքի ծառայությունների մատուցման հետ կապված իրենց դերերի և պարտականությունների վերաբերյալ: Այս ծրագիրը պետք է հաշվի առնի այլընտրանքային խնամքի տարբեր ձևերը։

19. Մշակել և իրականացնել այլընտրանքային խնամքի ծառայություններ մատուցող համապատասխան մասնագետների ինստիտուցիոնալացված ուսուցում, որոնց մեջ են մտնում պրոբացիոն և սոցիալական ապահովության աշխատակիցները, դատական ծառայողները, ոստիկանության աշխատակիցները, ուսուցիչները, տեղական խորհուրդները, ՔՀԿ-ները և բուժաշխատողները։

20. Վերապատրաստել հոգևորականներին, մշակութային առաջնորդներին և պարա-սոցիալական աշխատողներին խնամատարության լավ փորձի վերաբերյալ և հետամուտ լինել խնամակալներին համայնքային զարգացման աշխատակիցների/ պրոբացիայի և սոցիալական ապահովության աշխատակիցների ղեկավարությամբ և վերահսկողությամբ:

21. Վերապատրաստել խնամակալներին և որդեգիր ծնողներին և օգնել ինքնօգնության ցանցերի ստեղծմանը:

22. Ընտրել և վերապատրաստել լրացուցիչ պարա-սոցիալական աշխատողներ՝ ապահովելու համայնքներում երեխայի խնամքի հետ կապված հարցերի շուրջ իրազեկման աշխատանքները և համապատասխան աջակցություն տրամադրել սոցիալական

աշխատողներին կապված դեպքերի գնահատման, տեղական ծառայությունների ուղղորդման, երեխայի և/ կամ ընտանիքի խնամքի անհատական պլանների մշակման, բարեկամների մոբիլիզացման և ծնողավարման աջակցության հետ:

23. Մշակել երեխաների այլընտրանքային խնամքի մշտադիտարկման ստանդարտացված ցուցանիշներ և ներդաշնակեցնել այլընտրանքային խնամքի առկա ցուցանիշների հետ:

24. Իրականացնել բոլոր շուրջօրյա խնամքի հաստատությունների հաշվարկ և պարբերաբար գրանցել այդ հաստատությունների երեխաներին կենտրոնացված տվյալների բազայում:

25. Ուժեղացնել ջանքերը՝ կարգավորելու և վերահսկելու ներքին և օտարերկրյա որդեգրումները:

26. Ստեղծել և վարել խնամատարության և/ կամ որդեգրման ենթակա երեխաների կենտրոնական տվյալների բազա:

27. Մշակել այլընտրանքային խնամքի շահերի պաշտպանության և հաղորդակցման ռազմավարություն:

28. Այլընտրանքային խնամքի իրականացման կառույցի միջոցով աջակցել Գենդերի, աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարությանը, իրազեկել դոնորներին կառավարության և գլոբալ քաղաքականության վերաբերյալ և վերհասցեագրել ֆինանսավորումը դեպի ընտանիքում կազմակերպվող խնամք:

29. Բարձրացնել իրազեկվածությունը համայնքներում և մասնագետների շրջանում այլընտրանքային վատ խնամքի տակ գտնվող երեխաների համար հնարավոր վնասակար արդյունքների և երեխայի համար «ընտանեկան կյանքի» կարևորության մասին:

30. Բարելավել մեխանիզմները՝ վերահսկելու մասնավոր և զարգացման գործընկերների ֆինանսական ներդրումները այլընտրանքային խնամքում:

31. Ապահովել բազմաոլորտային ֆինանսավորում՝աջակցելու ազգային և մարզային մակարդակներում այլընտրանքային խնամքի ծառայությունների մատուցմանը, այդ թվում՝ պետական-մասնավոր գործընկերության միջոցով:

32. Բանակցել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ՝ռեսուրսները վերահասցեավորել դեպի ընտանիքների պահպանում և ընտանիքների ամրապնդման ծառայություններ:

33. Ուղղորդել դոնորներին և զարգացման գործընկերներին առաջնահերթ ֆինանսավորում տրամադրելու այն կազմակերպություններին, որոնք աշխատում են ընտանիքներում երեխաներին պահելու ուղղությամբ՝ ընտանեկան խնամքի և ընտանիքի ամրապնդման միջոցառումների միջոցով:

34. Այլընտրանքային խնամքի բոլոր ոլորտների համար իրականացնել ծախսերի հաշվարկ:

MEASURE Evaluation
Հյուսիսային Կարոլինայի համալսարան, Չեփել Հիլ
123 Վեստ Ֆրանկլինի փողոց, Մասնաշենք 330
Չեփել Հիլ, Հյուսիսային Կարոլինա 27516
Հեռախոս. +1-919-445-9350 | measure@unc.edu
www.measureevaluation.org

Զեկույցը պատրաստվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցության շնորհիվ՝ MEASURE Evaluation AIDOAA- L-14-00004 համագործակցության համաձայնագրի ներքո: MEASURE Evaluation նախաձեռնությունն իրականացվում է Հյուսիսային Կարոլինայի համալսարանի Կարոլինայի բնակչության հարցերով կենտրոնի կողմից (Չափել Հիլլ)՝ ICF International-ի, Ջոնն Սնոու Ինք.-ի, Առողջապահության կառավարման գիտությունների, Պալադիում և Տուլանի համալսարանի հետ համատեղ: Փաստաթղթում արտահայտված տեսակետները պարտադիր չէ , որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ Կառավարության տեսակետները.
TR-18-282-AR

ISBN: 978-1-64232-063-3